Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պարտիզակ բնակավայր 29.04.2025 թ.

2025 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 11:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Պարտիզակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Կ.Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արագածոտնի մարզի Լուկաշինի տուֆերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Թալին համայնքի ներկայացուցիչ Գագիկ Միրզախանյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շահագործման փուլում նախատեսվող աշխատանքները: Նա ներկայացրեց հանքարդյունահանման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային

ռեսուրսների, հողի հետ կապված: Նա նշեց, որ բոլոր ազդեցությունների համար մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ, օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան և այլն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչները հարց բարձրացրեցին հանքի փակումից հետո ռեկուլտիվացման աշխատանքների վերաբերյալ, ինչին ի պատասխան ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ ներկայացվել է փակման ծրագիր, որում նախատեսվում են ռեկուլտիվացման աշխատանքներ: Բացի այդ, ընկերությունը գործունեության ընթացքում գումար է վճարելու շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով:

Քննարկվեց նաև ազդակիր համայնքի բնակիչներին աշխատանքով ապահովելու հարցը,ազդակիր համայնքի սոցիալական ծրագրերին աջակցելու և գործունեության հետ կապված այլ հարցեր:

Քննարկման ավարտին ներկաները նշեցին, որ ողջունում են նախատեսվող գործունեության իրականացումը և մաղթեցին հաջողություն:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր բնակավայրի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ **Ք. Հարությունյան**

«Կ. Վարդանյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ **Ա. Անտոնյան**